

## ԵԴՈՒԱՐԻ ՃԵՐԵՃԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ԴԵՍՊԱՆ ԻՄՐԱՅԷԼԻ ՄԷՋ

Միացեալ նահանգաց Կառավարութեան կողմէ Խրայէլի համար նոր նշանակուած դժուանն է հայորդի Տիար նդուարդ Ճերեճեան որ Թէ Ավիլ հաստատուեցաւ ընտանիքով Յունուարի կէսերուն:

Ամեն. Պատրիարք Սրբազն Հայրը շնորհաւորական իր առաջին հեռաձայնային խօսակցութեան ընթացքին հրաւիրած էր Հայ Դեսպանը Յունուար 18ի կէս գիշերին մասնակցելու Հայկական Ծնունդի պաշտամունքին, Բերդիկեմի Սննդեան Այրին մէջ, բայց կարելի չեղու՝ նոր պաշտօնի հաստատման եւ պետական ընդունելութեանց խնոր յայտագրին պատճառաւ:

Առաջին առիրով, 14 Փետրուար Երկուշարքի յետ միջօրէին Պատրիարքարան այցելեց, ընկերակցութեամբ Խրայէլի մէջ Ամերիկան Հիւպատոս Տիար էտուըրտ Ապինկընի, որ նոյնպէս նոր նշանակուած է այս պաշտօնին: Սրոց Յակոբեանց Մայր Տաճարը այցելելէն յետոյ, Պատրիարքարան քարձրացան հիւրերը ընկերակցութեամբ

Լուսարարապետ Գեր. Տ. Դաւիթ Արք. Սահականի, Գեր. Տ. Սեւան Եպս. Ղարիպեանի, Գեր. Տ. Յուսիկ Եպս. Պաղտասեանի, և Աւագ Թարգման Տ. Ռ. Ազմիկ Վրդ. Պօղոսեանի: Տիար Դեսպան Ճերեճեան յիշեց իր հանդիպումները Պատրիարք Սրբազն Հօր հետ Սովետական իշխանութեան շրջանին Մոսկուայի մէջ, ապա Ռուսինկընի եւ նիւ Եորքի մէջ, անդրադառ նալով իր փորձառութիւններուն նաեւ Դամակոսի մէջ իրրեւ Սուրբոյ Դեսպան: Իր ողջմիտ դատողութեամբ եւ սրտրաց հաղորդականութեամբ Տիար Ճերեճեան համակրութիւնը շահած է թէ՝ իր պաշտօնակիցներուն եւ թէ տարրեր երկիրներու պետական անձնաւորութեանց, իրրեւ Վատահելի ներկայացուցիչը Ամերիկան կառավարութեան, մանաւանդ նկատի առած Միջին Արեւելքի երկիրներու շրջանակը եւ յարաբերութիւնները: Քաղաքական ներկայ բարդ կացութեան անդրադառնալով յուսալից է որ վերջ պիտի տրուի եղրայրադաւ խժդժութիւններու, որպէս զի ժողովուրդները կարենան վայելի խաղաղութեան բարիկները:

### ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆՔ

#### Ա. Սննդեան Շնորհաւորականք

Պատրիարք Սրբազն Հայրը Նոր Տարուան եւ Ա. Սննդեան տօներու առիրով իր քարեմադրութեանց եւ շնորհաւորանքի գիրերը յդեց Հոգեւոր եւ Կառավարական պետերուն, որոնց շնորհաւորագիրերը ընդունած էն-

- Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, Նորին Ա. Օծուրիւն Տ. Տ. Վազգէն Առաջին Սրբազնագոյն Կարողիկոսին:

- Մեծի Տաճան Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ, Նորին Ա. Օծուրիւն Տ. Տ. Գարեգին Բ. Կարողիկոսին:

- Թուրքիոյ Հայոց Ամեն. Տ. Գարեգին Պատրիարք Գաղացնեանին:

- Հոռմէական Կարողիկ Եկեղեցւոյ Քահանայապետին՝ Նորին Սրբութիւն Յովիաննեւ Պօղոս Բ. Պապին:

- Մոսկուայի եւ Ռուսիոյ Օրբոտու Եկեղեցւոյ Ամեն. Տ. Տ. Ալեքսէ Բ. Սրբազն Պատրիարքին:

- Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան նախագահ Տիար Ռոպերթ Կիւլպէնկեանին: Թեմակալ Առաջնորդներուն, Պետական եւ Ազգային Հաստատութեանց դեկապարներուն: